ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
"ՄԻՐ" ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԽԱՓԱՆ ԵՎ ԱՆԿԱԽ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ մասնակից պետություններ,

հանդիսանալով 1992 թվականի հոկտեմբերի 9-ի՝ Միջպետական հեռուստառադիոընկերության (ՄՀՌԸ) ստեղծման մասին Համաձայնագրին եւ 1993 թվականի հունվարի 22-ի՝ Միջպետական հեռուստառադիոընկերության Կանոնադրությանը համապատասխան "Միր" ՄՀՌԸ հիմնադիրներ,

հաստատելով իրենց կողմնակցությունը տեղեկատվության միջազգային փոխանակման հանրաճանաչ սկզբունքներին,

ցանկանալով նպաստել շահագրգիռ պետությունների տեղեկատվական ընդհանուր տարածքի ստեղծմանը,

ձգտելով ստեղծել միջազգային-իրավական երաշխիքներ մասնակից պետությունների տարածքներում որպես միջպետական կազմակերպություն "Միր" ՄՀՌԸ մասնագիտական գործունեության անխափան եւ անկախ իրականացման համար,

գիտակցելով, որ նման միջազգային-իրավական երաշխիքները տրամադրվում են ոչ թե հօգուտ առանձին անձանց, այլ "Միր" ՄՀՌԸ գործառույթների անխափան իրականացման ապահովման համար, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար ներքոհիշյալ հասկացությունները նշանակում են.

1. "Ընկերություն"՝ "Միր" միջպետական հեռուստառադիոընկերություն եւ մասնակից պետություններում նրա մասնաճյուղեր:
2. "Ներկայացուցիչներ Ընկերությունում"՝ Ընկերությունում մասնակից պետությունների լիազոր ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Ընկերությանն առնչվող խորհրդակցություններում եւ համաժողովներում մասնակցող մասնակից պետությունների պատվիրակությունների անդամներ:
3. "Ընկերության պաշտոնատար անձինք"՝ Ընկերությունում աշխատանքի ընդունված բոլոր անձինք եւ ցուցակում նշված, որը Ընկերությունը փոխանցում է համապատասխան մասնակից պետությունների իրավասու մարմիններին:

ՀՈԴՎԱԾ 2

1. Մասնակից պետություններն իրենց տարածքներում Ընկերության եւ նրա պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ Ընկերության ներկայացուցիչներին տրամադրում են այնպիսի արտոնություններ եւ անձեռնմխելիություն, որն անհրաժեշտ է Ընկերությանը՝ իր կանոնադրական խնդիրներին համապատասխան, գործունեության ապահովման համար:
2. Ընկերությունում ներկայացուցիչները եւ Ընկերության պաշտոնատար անձինք հարգում են մասնակից պետությունների օրենսդրությունները, որոնց տարածքներում նրանք իրականացնում են իրենց ծառայողական գործառույթները, ինչպես նաեւ այդ պետությունների ժողովուրդների ավանդույթները եւ սովորույթները:

ՀՈԴՎԱԾ 3

Ընկերությունը, նրա գույքը եւ ակտիվները օգտվում են անձեռնմխելիությունից, վարչական եւ դատական միջամտությունից ու գործադիր գործողություններից:

ՀՈԴՎԱԾ 4

Ընկերության արխիվները եւ փաստաթղթերը, ինչպես նաեւ նրա շինություններն անձեռնմխելի են:

ՀՈԴՎԱԾ 5

Ընկերության գույքը ենթակա չէ խուզարկության, առգրավման եւ բռնագրավման վարչական կարգով:

ՀՈԴՎԱԾ 6

1. Ընկերությունը, նրա գույքը ազատվում են ցանկացած բնույթի ուղղակի հարկերից եւ գանձումներից, բացառությամբ կոմունալ եւ նմանատիպ այլ ծառայությունների համար վճարներից:
2. Ընկերությունը ազատվում է մաքսավճարներից եւ սահմանափակումներից՝ "Միր" ՄՀՈԸ Կանոնադրությանը համապատասխան նպատակների օգտագործման համար նախատեսված առարկաների ներմուծման եւ արտահանման դեպքում:
3. Ընկերությունը օգտվում է ոչ պակաս բարենպաստ պայմաններից առաջնայնության, փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային կապի սակագների եւ վճարների վերաբերյալ, քան նրանք, որոնցից տվյալ մասնակից պետությունում օգտվում են միջկառավարական կազմակերպությունները:

ՀՈԴՎԱԾ 7

1. Իրենց պաշտոնական գործառույթներն իրականացնելիս, Ընկերությունում ներկայացուցիչները օգտվում են անձեռնմխելիությունից, անձնական ձերբակալությունից կամ կալանքի տակ վերցնելուց, ինչպես նաեւ դատական եւ վարչական ընդդատությունից:
2. Ընկերությունում ներկայացուցիչների ծառայողական թղթակցությունը եւ փաստաթղթերը անձեռնմխելի են:
3. Ընկերությունում ներկայացուցիչները մասնակից պետությունների տարածքներում, բացի իրենց քաղաքացիության պետության տարածքից, ազատվում են անձնական պարհակներից եւ աշխատավարձի գանձվող հարկերից, որը վճարվում է նրանց քաղաքացիության պետության կողմից:

4. Ընկերությունում ներկայացուցիչները մասնակից պետությունների տարածքներում, բացի իրենց քաղաքացիության պետության տարածքից, ազատվում են պարտադիր գրանցումից եւ ցուցակագրումից: Մասնակից պետությունների տարածքներ այցելելու համար մուտքի արտոնագիր տրամադրելու համար նրանց դիմումները, արտոնագրային ռեժիմ մտցնելու դեպքում, քննարկվում են արտահերթ:

ՀՈԴՎԱԾ 8

Ընկերության պաշտոնատար անձինք իրենց ծառայողական գործառույթներն իրականացնելիս ենթարկվում են միայն Ընկերությանը:

ՀՈԴՎԱԾ 9

Ընկերության պաշտոնատար անձինք, որոնք Ընկերության նստավայր պետության քաղաքացիներ չեն հանդիսանում, ազատվում են անձնական պարհակներից, ինչպես նաեւ Ընկերության կողմից իրենց վճարվող աշխատավարձի նկատմամբ հարկերից եւ գանձումներից: Նրանք ազատվում են նաեւ անձնական օգտագործման համար նախատեսված առարկաների, ներառյալ Ընկերության նստավայր պետություն առաջին անգամ մուտք

գործելիս բնակության առարկաներից եւ այդ պետությունից վերջնականապես մեկնելիս նշված առարկաների արտահանման թույլտվության համար մաքսային վճարներից: Մասնակից պետությունների տարածքներ այցելելու համար մուտքի արտոնագիր տրամադրելու համար նրանց դիմումները, արտոնագրային ռեժիմ մտցնելու դեպքում, քննարկվում են արտահերթ:

ՀՈԴՎԱԾ 10

1. Մասնակից պետությունները օժանդակություն են ցուցաբերում Ընկերությանը, Ընկերությունում ներկայացուցիչներին եւ Ընկերության պաշտոնատար անձանց, որոնք Ընկերության նստավայր պետության քաղաքացիներ չեն հանդիսանում, ծառայողական եւ բնակելի տարածքներ ստանալու, ծառայողական տարածքները սարքավորելու, ինչպես նաեւ բժշկական օգնություն եւ այլ սոցիալական ու կոմունալ ծառայություններ ստանալու գործում՝ Ընկերության նստավայր պետությունում միջկառավարական կազմակերպությունների համար սահմանված կարգին համապատասխան:
2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները, որոնք վերաբերում են բժշկական օգնությանը եւ այլ սոցիալական ու կոմունալ ծառայություններին, տարածվում են Ընկերությունում ներկայացուցիչների եւ Ընկերության պաշտոնատար անձանց հետ բնակվող նրանց ընտանիքների անդամների վրա:

ՀՈԴՎԱԾ 11

Ընկերության կանոնադրական խնդիրներին համապատասխան, նրա գործունեության ապահովման համար անհրաժեշտ արտոնությունները եւ անձեռնմխելիությունը տրամադրվում եւ իրացվում են Ընկերության ներկայացմամբ, մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից տրվող փաստաթղթերի հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 12

1. Մասնակից պետությունները եւ Ընկերությունը կարող են հրաժարվել համապատասխանաբար իրենց ներկայացուցիչների, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անձեռնմխելիությունից, եթե անձեռնմխելիությունը խոչընդոտում է արդարադատության իրականացմանը եւ նման մերժումը վնաս չի հասցնում նպատակներին, որոնց հետ կապված անձեռնմխելիությունը տրամադրվել է:
2. Ընկերությանը վերաբերող մասով, Ընկերության պաշտոնատար անձանց, բացառությամբ Ընկերության նախագահի եւ Տնօրենների խորհրդի անդամների, անձեռնմխելիությունից հրաժարվելու իրավունքը պատկանում է Ընկերության նախագահին:
Ընկերության նախագահի եւ Տնօրենների խորհրդի անդամների անձեռնմխելիությունից կարող է հրաժարվել միայն Ընկերությունում ներկայացուցիչների ընդհանուր հավաքը:

ՀՈԴՎԱԾ 13

1. Սույն Համաձայնագրի մեկնաբանմանն ու կիրառմանը վերաբերող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով կամ այլ ընթացակարգի համաձայն, որի մասին շահագրգիռ կողմերը կարող են պայմանավորվել:
2. Սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում առանձին մասնակից պետությունների եւ Ընկերության միջեւ արձանագրությունների կնքմանը, որոնք կոնկրետացնում են սույն Համաձայնագրի կիրառումը նման մասնակից պետությունների տարածքներում:

ՀՈԴՎԱԾ 14

1. Սույն Համաձայնագրում ուղղումներ կարող է առաջարկել ցանկացած մասնակից պետություն:
2. Սույն Համաձայնագրի ուղղումները մասնակից պետությունները ընդունում են այն նույն կարգով, ինչ կարգով նրանք հաստատել են սույն Համաձայնագիրը:

ՀՈԴՎԱԾ 15

1. Սույն Համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վեցերորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու տասներորդ օրը:
3. "Միր" ՄՀՈԸ Կանոնադրության 4-րդ հոդվածին համապատասխան, Ընկերության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր պետության համար, սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Ընկերության կազմի մեջ այդ պետության մտնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 16

Ցանկացած մասնակից պետություն սույն Համաձայնագրում դադարեցնում է իր մասնակցությունը Ընկերությունից դուրս գալու դեպքում:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1993 թվականի դեկտեմբերի 24-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի դրա հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996 թվականի հուլիսի 5-ից: